ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը
ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյան

2. Գործուղման վայրը և ժամկետները.
Ք. Տալլին (Էստոնիայի Հանրապետություն) սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 7-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.
«Բաց կառավարման գործընկերություն»

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Մասնակցություն «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնության գլոբալ գագաթնաժողովին

5. Քննարկված թեմաները
• Բաց կառավարման դերը կոռուպցիայի դեմ պայքարում,
•Թվային կառավարում, ներառյալ նոր տեխնոլոգիաների ներդրումը,
•Կլիմայի փոփոխություն

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
Միջոցառման ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել է իրական շահառուների ռեգիստրի և գնումների համակարգի ինտեգրման առկա մեթոդները, ինչպես նաև ՀՀ փորձը: Մասնավորապես ՀՀ կողմից բարձրացվեց միջազգային ռեգիստրների և դրանց միջև տեղեկատվության փոխանակման անհրաժեշտությունը և նման մեխանիզմների բացակայության հետևանքով գնումների համակարգում առաջացող խնդիրները՝ միջազգային մրցույթների դեպքում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.
Պայմանավորվածություն է ձեռք բերվել փորձի փոխանակում իրականացնել տարեկան մի-քանի անգամ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցեց նաև Financial Transparency and Integrity (FTI) Cohort-ի բարձր մակարդակում կազմակերպված փակ հանդիպմանը, որի ընթաքում ևս քննարկվեցին գնումների համակագրի թափանցիկության և հաշվետվողականության խնդիրները: ՀՀ փորձը համարվեց առաջադեմ: Տեղի ունեցավ հանդիպում ՀՀ ֆինանսների նախարարության և Էստոնիայի ֆինանսների նախարարությունների միջև: Հանդիպման ընթացքում Էստոնիայի ֆինանսների նախարարությունը ներկայացրեց գնումների համակարգի և թվայնացման փորձը: Գնումների համակարգի վերաբերյալ: Էստոնական փորձը ունի որոշակի նմանություն ՀՀ փորձին, մասնավորապես՝

1. Համակարգը ամբողջությամբ ապակենտրոնացված է, կենտրոնացման փորձերը հանգեցրել են ձախողումների, սակայն թվային համակարգի ներդրումից հետո ստեղծվել է օնլայն խանութ գրենական պիտույքների և այլ համանման առարկաների համար, որը փաստացի ստեղծել է կենտրոնացմանը մոտարկված միջավայր: Երաշխիքների մակարդակը որոշվում է պատվիրատուների կողմից:
2. Թվային համակարգը առաջ է ՀՀ համակարգից նրա հաշվին, որ կարողանում է գեներացնել մեքենայակարդալի տվյալներ: ՀՀ նոր թվային համակարգը փաստացի հանգիսանալու է մի-քանի քայլ առաջ գնացած համակարգ Էստոնականի նկատմամբ:
3. ՀՀ-ում առկա քաղհասարակության կողմից գնումների վերահսկողության գործիքակազմը Էստոնիայում բացակայում է:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

12.09.2023թ.

Recoverable Signature

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574